ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ2/6665/02/25**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԻ ՀԻՄՔԻ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

նախագահությամբ դատավոր Աննա Շիլաջյանի

2025 թվականի օգոստոսի 14-ին քաղաք Երևան

դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի ՝ԱՐԽԻ ԹՈՒԼՍ՞ ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կողմերի միջև 05.08.2024 թվականին կնքված թիվ ՝ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-24/67՞ ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Տ

[ԱՐԽԻ ԹՈՒԼՍ] ՍՊ ընկերության ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կողմերի միջև 05.08.2024 թվականին կնքված թիվ [ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-24/67] ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը էլեկտրոնային դատավարության համակարգի միջոցով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Ճիլաջյանին է մակագրվել 26.06.2025 թվականին:

Դատարանի 01.07.2025 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, պատասխանողից պահանջվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները և դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 12.08.2025 թվականին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Հայցվորի ներկայացուցիչը 08.07.2025 թվականին միջնորդել է հայցի հիմք և առարկան փոփոխել:

Միջնորդությամբ վերջինս մասնավորապես հայտնել է.

«Ձեր վարույթում է գտնվում թիվ ԵԴ2/6665/02/25 ըստ հայցի «Արխի թուլս» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի՝ պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի դրույթները, ներկայացնում ենք սույն միջնորդությունը, հետևյալ պատճառաբանություններով.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով՝ հայցի առարկայի փոփոխությունը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջն այլ պահանջով փոխարինելը, պահանջը փոփոխելը կամ լրացնելն է, այդ թվում՝ պահանջների չափն ավելացնելը կամ նվազեցնելը, որը թույլատրում է առաջին ատյանի դատարանը: Սույն օրենսգրքի իմաստով՝ հայցի հիմքի փոփոխությունը հայցվորի կողմից հայցի հիմքում սկզբնապես դրված փաստերն այլ փաստերով փոխարինելն է, ինչպես նաև հայցի հիմքում դրված փաստերի շրջանակը ճշգրտելն է այն լրացնելու կամ պակասեցնելու եղանակով:

Հիմք ընդունելով վերոնշյալ հոդվածի դրույթներով սահմանված՝ Հայցվորին վերապահված իրավունքից ներկայացնում ենք պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը լրացնելու, հայցի առարկայի և հիմքում սկզբնապես դրված փաստերի շրջանակը լրացնելու միջնորդություն, հետևյալ բովանդակությամբ.

Հարկ է նշել, որ հայցվորից պատասխանողի հաշվին է գանձվել 1,117,500 (մեկ միլիոն հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, որպես պայմանագրի և որակավորման ապահովումների գումար՝ պայմանագրի

միակողմանի լուծման հիմքով (հաշվի առնելով, որ գնման գործընթացը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով, ուստի համաձայնագիր չկնքվելու և դրա հետևանքով պայմանագիրը միակողմանի լուծվելու հիմքով գանձվել է հայտի ապահովումը)։

Տվյալ դեպքում գնման գործընթացը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիմքով, որի արդյունքում ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն հայտի ապահովում չի ներկայացվում, հրավերով ներկայացվել է նման ոչ իրավաչափ պահանջ և ներկայումս օգտվելով հայտի ապահովումը կանխիկ փողի ձևով ներկայացված լինելու հանգամանքից, հայցվորի հաշվից գանձվել է 1,117,500 (մեկ միլիոն հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ («ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից տրված թիվ 008712 և թիվ 008711 վճարման հանձնարարագրերը)։

Վերոգրյալներից ելնելով՝ միջնորդում ենք հայցի առարկան քննարկել հայցադիմումով, և սույն միջնորդությամբ ներկայացված հիմքերով՝ հետևյալ հստակեցված վերջնական պահանջներով.

1. Քաղաքաշինության կոմիտեի կողմից «Արխի թուլս» ՍՊ ընկերության հետ 05.08.2024 թվականին կնքված թիվ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-24/67» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումը ճանաչել անվավեր։

2. Որպես հետևանք՝ պարտավորեցնել ՀՀ Քաղաքաշինության կոմիտեին «Արխի թուլս» ՍՊ ընկերությանը վերադարձնել 1.117.500 (մեկ միլիոն հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը, որպես սույն գնման ընթացակարգի շրջանակներում հայցվորից գանձված գումարը։»։

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորը հայցի առարկայի և հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ ներկայացնում է գրավոր միջնորդություն մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը։

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով՝ հայցի առարկայի փոփոխությունը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջն այլ պահանջով փոխարինելը, պահանջը փոփոխելը կամ լրացնելն է, այդ թվում՝ պահանջների չափն ավելացնելը կամ նվազեցնելը, որը թույլատրում է առաջին ատյանի դատարանը։

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ կայացնում է առանձին դատական ակտի ձևով որոշում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջնորդությունը քննարկվել և այն թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ որոշումը կայացվել է դատական նիստում՝ գործին մասնակցող անձանց ներկայությամբ։

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը դատարանը մերժում է, եթե այն բավարարելու դեպքում փոփոխվում է այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը

սկզբնապես հարուցվել է, կամ քննվող գործը դուրս է գալու առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից:

Հիմք ընդունելով սկզբնապես ներկայացված հայցի փաստական հիմքերը, հայցի առարկան (ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի կողմից վերջինիս և «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ-ի միջև 05.08.2024 թվականին կնքված թիվ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-24/67 ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումը ճանաչել անվավեր), Դատարանը գտնում է, որ Միջնորդությունը ենթակա է բավարարման, քանի որ դրա արդյունքում չի փոփոխվում այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, իսկ քննվող գործը դուրս չի գալիս առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով, Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Միջնորդությունը բավարարել. հայցի հիմքը լրացնել Միջնորդությամբ նշված հիմքերով, իսկ հայցի առարկան փոփոխել հետևյալ կերպ.

- Քաղաքաշինության կոմիտեի կողմից «Արխի թուլս» ՍՊ ընկերության հետ 05.08.2024 թվականին կնքված թիվ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-24/67» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումը ճանաչել անվավեր:

- Որպես հետևանք՝ պարտավորեցնել ՀՀ Քաղաքաշինության կոմիտեին «Արխի թուլս» ՍՊ ընկերությանը վերադարձնել 1.117.500 (մեկ միլիոն հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը, որպես սույն գնման ընթացակարգի շրջանակներում հայցվորից գանձված գումարը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ **Աննա Շիլաջյան** Digitally signed by SHILAJYAN ANNA 5208910872

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am